

ըլ խոստանումէր. նա ոչ լսորենացու յիշածը կարող է լինել և ոչ էլ « Ենովքայ զիրք » առնունով յայտնի անվաեր գրութեան հետ, ինչպէս երեսումէ, որ և է կապ ունի: Աերշինս հրեական ծագութն ունի և գրուել է հաւանականօրէն Քրիստոսից առաջ և յիշուած է արդէն Յուդայի թղթի մէջ (Համ. 14):

Պեր դարում յայտնուել է. այդ զրքի եթովպերէն թարգմանութիւնը միայն (գերմանէրէնի փոխադրուած և հրատարակուած բերլինի ուսուցչապետ Պիելմանի ձեռքով) և այս թարգմանութիւնը բովանդակումէ իւր մէջ հրեշտակների մի մասի անկման պատմութիւնը, հրեշտակների միջոցով երկնքի, երկրի, դժոխքի, արքայութեան գաղտնիքների մասին, արուած յայտնութիւններ ևն: Այդ գրուածքի հետ մեր տեսիլը համեմատելու միջոց չունիք, բայց վերջինիս բովանդակութիւնը յայտնի վկայումէ, որ խաչակրաց արշաւանքից առաջ գրուած լինիլ նա չէ կարող: Նոյնպիսի մի գործ է նաև զրեթէ նոյն արժէքն ունի, ինչ որ Պանիէլ մարգարէի մեր ձեռագիրներում պահուած անվաերական ջեսիլը, միայն թէ սորա ծագումը հայիկան է, իսկ առաջինը հաւանականօրէն օտար աղբիւրից է առնուած:



## ՀԱՅԿԱԿԱՆ ՀՍՈՒԹԻՒՆՆԵՐ.

մբագրութիւնս ստացել է Ա. Խջմիածնի միաբանութեան աւագագոյն անդամ բարձր սրբազնան Պետրոս Արքազան Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանցից հետեւեալնամակը, որի մէջ երկու հնագիտական գիւտերի մասին է աւետում:

Հայկական բենուազրութեան հետազօտողների նահապեան է սրբազն Մեսրոպ Արքեպիսկոպոսը, որ մինչև այժմ էլ չէ գաղարում արձանագրութիւնների հետախուզակութիւնից: Աչքի առաջ ունենալով այն հետաքրքրութիւնը, որ այժմ կայ հայկական կամ Պահեան կոչուած բենուազրութեան համար շտամպեցինք այդ մասին աւետելու, մի այլ անգամուան թողնելով այդ արձանագրութեան ճշգրտապատկերն հրատարակելու:

Երկրորդ զիւտը նոյնպէս իւր նշանակութիւնն ունի, քանի որ մինչև այսօր միւսէ ոնի (տօսակու) հետքեր գեռ չեն գտնուած Հայաստանի աւերաբների մէջ, թէպէտ և պէտք է ստուգապէս ենթագրել որ՝ բիւզանդական ծարտարապետութեան հետ Տանրաբիչն ակարանինը ևս մուտք պիտի գործած լինի Հայաստան Բագրատունեաց շըջանում:

Մորագիւտ միւսէ ոնի նկարը Մորին Արքաղնութիւնը ուղարկել է Մուկուայի հնագիտական ընկերութեան, որ երեխ լցո կընծայէ այդ իւր հրատարակութիւնների մէջ:

Աշաւասիկ Մորին բարձր Արքաղնութեան նամակը.

Բազմաշխատ Խմբագրութեան Արարատ ամսագրի.

Ազգիս Վեհափառ Հայրապետի բանաւոր հրամանով նոյեմբեր ամսի սկզբներումն ուղարկուած լինելով Խզդիր եկեղեցի օծելու և քահանայ ձեռնադրելու, օգուտ քաղեցի առթից և պաշտօնական գործերս աւարտելուց յետոյ մի փոքրիկ հնագիտական արշաւանք գործեցի գէպի Յուղակերտ և Արմաւիր:

Ուղեկիցներս էին Ա. Էջմիածնի միաբաններից արժանապատիւ Հմայեակ վարդապէտ Արշալունին, բարեշնորհ Բագրատ վ. Թաւաքալեանն ու Մըջակայ գիւղերի քահանաներից ումանք:

Այժմեան Պաշտուուն գիւղում, որ հին Յուղակերտի տեղն է, իմացանք, որ այդ տեղից մի վերստ հեռու, գէպի արևելք, արքունի պողոտայի վրայ անցեալ տարի բացուել է մի հին եկեղեցու հիմք: Մախ փութացինք

այդ եկեղեցին տեսնելու: Մի փոքրիկ բըրակից հողը վերցնելով՝ բացուելեր մի եկեղեցու հիմք, մեծամեծ որցաքարերով շինուած: Արձանագրութեան հետք չըզտանք: Կախ քան այս աւերակների հիմքը բացուելլու զիւղացիք մի կողմի պատի քարերը քանդել տարել էին շինուածոց համար առանց իմանալու, որ այդ տեղ եկեղեցու աւերակ կայ: Այժմ այդ աւերակ եկեղեցին ս. կարապետի անունն է կը լում: զիւղացիք ս. սեղանի տեղը սրբել և պատրաստել են, ուր ուխտի եկողները մոմեն վառում և խունկ ծխում: Այս աւերակը բանուկ ճանապարհի վրայ դանուելով, Խղդիրից դեպի Ալի-Ղըզըլ (նոր Ակոսի), բոլոր անցորդների համար զրեթէ ուխտատեղի է:

Այս եկեղեցու մօտերը մի քանի բըրակներ ևս փորուած էին և հաստ ու պինդ քարերով շինուածոց հիմունք բաց արած, որոնցից մէկը եռանկիւնաձև էր:

Թէ եկեղեցու և թէ միւս շինուածների քարերը բերուած էին երեխ Մասիս լեռան ստորոտում դանուող ամենահին բերդերի քարերից, որոնք նման են Արմաւրի բերդի քարերին թէ մեծութեամբ և թէ դոյնով:

Ս. կարապետ եկեղեցու աւերակից վերադարձնեկ զիւղը: Աշնանային առատահոս անձրեները արգելեցին մեզ զնալու և հետազոտելու Բաշ-՛բուլաղ անունով աղբիւրի և նոյնանուն քրդի զիւղի վերեւում եղած հինաւուրց բերդը:

Դաշրուառուն զիւղում 1880 և 1881 թուականներին բեեռոազիր արձանագրութիւններ էի գտել որոնցից երկրորդն ու երրորդը պահւում էին ոստիկանի (ուրիսուական) զրանը, իսկ առաջնը մի անշնորհք զիւղացի սանդի քար էր շինել, որին թէպէտ շատ յանդիմանեցինք, բայց արդէն անցել էր:

Յաջորդ օրը յետ դարձանք Խղդիր և այն տեղից Խվճիլար զիւղն անցանք, ուր օծեցինք տեղելոյն նորակառոյց ս. Աստուածածին եկեղեցին և միթմարեցինք ժողովուրդը քարողելով:

Այսուղ մեզ յայտնեցին, որ մերձակայ

(Թէջրլու<sup>\*)</sup>) զիւղում մի հողակոյտի եղերքին մանրախիճ է երեւում որ չեն ճանաչում թէ ի՞նչ տեսակ քարեր են: Հետաքրքրուելով զիւղացւոց՝ պատմածներից զնացինք (Թէջրլու: Գիւղից մի վերստաչափ գէպի հարաւ արեւելք զանուում էր յիշեալ հողակոյտը որ աւելի մի մոխրակոյտ էր, սորա եղերքին երկում էին այն յիշուած մանրաքարերը:

Անմիջապէս զիւղիցը կանչել տուինք 15 մշակ և հրամայեցինք բլուրը փորել: Քիչ փորելուց յետոյ բացուեցաւ մի սրահի յատակ գոյնզգոյն քարերով ծաղկանկար զարդարուած, ինչպէս հին բիւղանդական կամ արարական միւսէն, (mosaquin) է: Արդեօք այս աւերակը զաւառիս նախնի իշխանների, կամարականների պալատի մնացորդն է, թէ արար ոսիկանների դղեակի աւերակը:

Թէջրլուից 8—9 վերսա գալով և անցնելով Երասխ զետը՝ հանգստացանք Արդարի զիւղում, ապա անցանք Կոր- Խվճիլար, Ուզուն - Օբայ, Արմտղու և Պուղի - զիտան հայրանակ զիւղելին և հասանք Արմաւրի: Յաջորդ օրը կիւրակի, էր ս. պատարազին ներկայ լինելուց և ժողովրդին միթմարելուց յետոյ ամրողջ խմբով զնացինք Արմաւրի բըրի զիսին կանգնած խաչն համրուրելու: Այս բըրի վրայ կանգնած մատուռը նշանաւոր ուխտատեղի է 1870 թուից սկսած ուխտի օրերը որոշուած են Զատկի երկրորդ կիւրակէն՝ զարնանը, իսկ զիւտ խաչի տօնը՝ աշնանը Ուխտատեղի խաչն ու աւետարանը համրուրելուց յետոյ հնագիտական հետախուզութիւնով պարապեցինք:

Արմաւրը մի անսպառ շտեմարան է հնագիտութեան, միայն որոնող ու վիճառող է պէտք:

Անցնելով բըրի հարաւ արեւմտեան կողմը և պարապի թափած քարերը<sup>\*\*</sup>) աչքէ անցնելով,

\*) Թէջրլու կամ Թաջրլու պարսկեթէն նշանակէ զատառականաց տեղի, որոյ երաժառում է Թաջրլու, որ նշանակէ Թագ ունեցող բայց աւելի հաւանական է Թամար բարի աղաւաղում լինել, որ է պալատ:

\*\*) Եղաքնակ զիւղացիք անխնայաբար քանդումն Արմաւրի պարիսաները. պէտք էր արգելնել այդ աւերման գործը, որ նութիւնները չանչնատան:

պատահեցինք քարից կտրած մի արձանազրութեան, որի հորիզոնական երկարութիւնն էր 21 արշին, իսկ ծայրերի ուղղանկիւնի գծերինը 2, 2 արշին: Այս տարածութեան վրայ 25 արշին քարը տաշուած, կոկուած և արձանազրութիւնով ծածկուած էր: Մինչև արձանազրութեան ստորին տողը 3 արշին էր բարձրութիւնը գետնից: Տողերի թիւն էր 5, իսկ զրութիւնը յայտնի բեկուազրութիւն է, թէպէտ անձրես և արես ազգեցութիւնից վերին աստիճանի աւելուած: Այս արձանազրութիւնը բլրի բնական, կարմիր և փխրուն քարերի վրայ փորազրուած լինելով՝ անձրեածրերը մաշել էին, ուստի և զրութիւնը շատ էր եղծուել այն աստիճան, որ առաջին հայեցքից մինչեւ իսկ դժուար էր ճանաչել, որ այդ տեղ արձանազրութիւն կայ: Տողերի սկզբներում միջում և վերջում մի քանի տեղ կային անեղծ զրերը որ կարելի եղաւ օրինակել: Ամբողջ արձանազրութեան ճշգրտապատկերի հանելը թողնելով յարմարագոյն ժամանակի՝ օրինակեցինք միայն անեղծ զրերը:

Արմաւրի այս նոր արձանազրութեան երեւան գալը մի ապացոյց է, որ բեկուազրութիւնը շատ զործածական է եղել հնումը Արարատեան երկրում: ուր գեռ ես շատ այդպիսի արձանազրութիւններ կարող են գտնուել եթէ անձնուեր և յարատե հետազոտների թիւը շատանայ:

ՄԵԽՐԱՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆՑ.

## ՓՐԵՈՒԵԼԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՊԱՆԱԿՅ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

ՅՈՒՅՈՒՆԻ ՄՈՆԱԳԱՐԺՈՒՅՆ ԵՂԱՆԱԿԻ  
ՆՊԱՏԱԿՅ.



Հարունակութիւն ) \*

իկին Վան—Քաղքարը զրա մասին պատուական աեղեկութիւններ է տալիս ճանաչելով մարդկային բնութիւնը և ընդունակութիւնները ֆրէօրէլը արուեց իր մանկավարժական եղանակին բոլորովին հասարակ բնական, ներգանակ տեսք: Այս իր ուշագրութիւնը չէ գարձնում միայն մարդու ընդունակութեանց վրայ, այլ և ամրացնումէ նրա հոգին ու մարմինը: Ֆրէօրէլը ոչ մի բան մոռացութեան չէ տուել: նա աշխատումէ զարդացնել մարդու ֆիզիքական մտաւոր և բարոյական կողմերը: Ֆրէօրէլը զրել է իր կրթական եղանակը զուտ մարդագիտական հիմքի վրայ: Զարդացման իւրաքանչիւր շրջանից խոճի մոօք հարցնումէ, թէ ինչ է հարկաւոր երեխային, որն է այն օրէնքը որ որոշումէ ընդունակութիւնների զարդացման կանոնաւոր ընթացքը:

Ֆրէօրէլը կարողացաւ ցոյց տալ ամենալաւ եղանակը որ պահանջումէ մարզել մկանները և գործարանները առանց արգելելու կամ նուազեցնելու սրտի երեակայութեան և ճաշակի զարգացումը:

Այս աշխատումէ իւրաքանչիւր մարդուն տէր գարձնել իր այն ընդունակութիւնների, որ բընութիւնը տուել էրնրան, նա կամենումէ պահանել ամեն մի մարդու ինքնուրոյնութիւնը, տալով նրան միջոց զարդացնելու այն ձիբը, շնորհը, որով նա ուրիշներից զանազանուումէ որոշումէ: Չըկայ երկու մարդ, որոնք ունե-

\* Ճնշ նախընթաց համար: